

## ԿԱՐՄԻՔ

### Նարինե Մելքոնյանի «Հայերենի հոլովական իմաստների համարժեքները իսպաներենում» թեկնածուական ատենախոսության մասին

Վերջին տարիներին մեր իրականության մեջ մեծ հետաքրքրություն են նկատվում իսպաներեն – հայերեն, հայերեն – իսպաներեն լեզուների բառապաշարի և քերականական տարբեր իրողությունների համադրական – զուգադրական ուսումնասիրություններին նվիրված աշխատանքները: Ն. Մելքոնյանի քննարկվող ատենախոսության թեման այժմեական լինելով հանդերձ, դեռևս չի դարձել քննության առարկա ինչպես հայ լեզվաբանության մեջ, այնպես էլ իսպանագիտության մեջ: Սույն թեման բնորոշվում է իր հատուկ բարդությամբ և բազմապլանային բնույթով: Հեղինակը նպատակ է դրել համաժամանակյա զուգադրման և համաժամանակյա նկարագրության եղանակներով ներկայացնելու հայերենի հոլովական իմաստների համարժեքները իսպաներենում: Ատենախոսության տեսական - մեթոդական հիմնավորումը, Ն. Մելքոնյանը ներկայացրել է ծավալուն բազմալեզվյան գրականության ուսումնասիրության միջոցով, որը տեսական հիմք է հանդիսացել թեմայի ուսումնասիրության համար: Նախ՝ համակողմանիորեն անդրադարձել է հոլովի քերականական կարգի ընդհանուր լեզվաբանական մի շարք տեսություններին, կապական կապակցություններին, իսպաներենի նախդիրներին ու նախդրավոր կապակցություններին, ապա հայերենի հոլովների և իսպաներենում հայերենի հոլովական իմաստների համարժեք ձևերի զուգադրական քննությանը: Ն. Մելքոնյանը դիտարկել է հոլովական իմաստի և հայերենի հոլովների քանակական մեկնաբանումը հայ լեզվաբանության մեջ:



Հատկանշական է, որ անդրադարձ կատարելով հայերենի հոլովների կապական կապակցությունների և իսպաներենի նախդիրների ու նախդրավոր կապակցությունների մասին առկա տեսակետներին՝ ատենախոսը մանրամասն ուսումնասիրել է հոլովների իմաստային դաշտերի նկարագրությունը: Յուրաքանչյուր լեզու ունի իրեն բնորոշ իմաստային համակարգը և այդ համակարգում առկա իմաստների արտահայտության համար տարբեր տիպային հատկանիշներ, որոնք էլ իրենց հերթին առաջ են բերում քանակական մի շարք տարբերություններ սույն ատենախոսության մեջ դիտարկվող լեզուներում: Իմաստից - ձև անցումը ատենախոսությունում ներկայացված է բավականին համակարգված կերպով. այն ներառում է ցուցայնության այնպիսի ենթակարգեր, ինչպիսիք են ժամանակի, տարածության, միջանձնային և վերացական հարաբերությունների տիրույթը, որոնց հիման վրա էլ ներկայացված են հայերենի հոլովները և դրանց իսպաներեն համարժեքները: Ն.Մելքոնյանը համակողմանիորեն վերլուծել և ամբողջությամբ ներկայացրել է ձև - իմաստ և իմաստ - ձև զուգադրումները համապատասխանության տեսանկյունից, ինչպես նաև լեզու և աշխարհընկալում, լեզու և իրականություն հարաբերակցությունը, որոնք արտահայտված են աշխատանքում մեջբերված Բրյոնդալի, Ռոկա-Պոնսի, Մեկոյի և այլոց տեսակետներում:

Ուշագրավ է ատենախոսության այն բաժինը, որտեղ համարժեքության դիտարկման փաստացի համատեքստն ընտրվել է համաձայն նշույթավորված միավորի շարահյուսական գործառույթի: Ընդ որում, հոլովական հարացույցի յուրաքանչյուր ենթակարգի կամ անդամի զուգադրումից հետո հեղինակը ներկայացնում է ընդհանրական տեղեկատվություն՝ համապատասխան զուգադրական աղյուսակներում:



Այս վերլուծությունները ցույց են տալիս հայերենի և իսպաներենի քերականական տարբեր օրինաչափություններ, որով էլ պայմանավորված են երկու լեզուներում առկա մի շարք քանակական տարբերությունները: Աշխատանքն ունի տեսական և գործնական նշանակություն ու կարող է լայն կիրառություն գտնել իսպաներենի և հայերենի քերականության և տիպաբանության բնագավառին առնչվող ուսումնական դասընթացներում, դիպլոմային և մագիստրոսական աշխատանքներ իրականացնելիս:

Աշխատանքը շարադրված է գրագետ լեզվով, շարադրանքն ունի կոտ և տրամաբանական կառուցվածք: Ատենախոսության վերջում բերված եզրակացությունները համոզիչ և ընդունելի են:

Ըստ արժանվույն գնահատելով կատարված ուսումնասիրությունը՝ նշենք որոշ ցանկություն-դիտողություններ.

- Նախընտրելի է, որ աշխատանքում տեղ գտած օրինակները դուրս բերված լինեին գեղարվեստական գրականությունից, որն էլ իր հերթին հնարավորություն կընձեռեր ատենախոսին ավելի լայն ուսումնասիրության արդյունքում անդրադառնալու թարգմանաբանությանն առնչվող մի շարք խնդիրների, ինչպես նաև ավելի բազմակողմանի հիմնավորել քանականան ուսումնասիրության արդյունքները:
- Ճիշտ է ատենախոսն անդրադարձել է հայագիտական և իսպանագիտական ուսումնասիրությունների՝ քերականությանն առնչվող ոլորտում առկա տեսություններին, հետազոտական սկզբունքներին ու մոտեցումներին, այնուամենայնիվ ցանկալի էր տեսնել իր իսկ մշակած տեսական մոդելը:

Վերոնշյալ դիտողությունները, իհարկե, չեն նվազեցնում կատարված ուսումնասիրության գիտական, տեսական և գործնական արժեքները, և ինչպես արդեն նշել ենք, սույն ատենախոսությունը ունի տեսական,



գործնական նշանակություն և կարող է օգտակար լինել ինչպես հայերեն-  
խապաներեն լեզուների տիպաբանական ուսումնասիրությունների, այնպես էլ  
գործնական թարգմանությունների բնագավառում:

Այս ամենը մեզ հիմք է տալիս միջնորդելու Հրաչյա Աճառյանի անվան  
Լեզվի ինստիտուտի ժ.02.02. մասնագիտական խորհրդին Նարինե Ստեփանի  
Մելքոնյանին շնորհելու բանասիրական գիտությունների թեկնածուի  
գիտական աստիճան:

Պաշտոնական ընդդիմախոս, բ.գ.թ.,  
դոցենտ Հռիփսիմե Լևոնի Օհանյան

*Դ. Օհանյան*

12.10.2022թ.

*Ե. Գ. Կ.* Գ. Կ. Գ. Կ.  
*Վ. Գ. Կ.* Կ. Գ. Կ.



*Օհանյան*  
*2*